

Ս. Ն. Գալ

ՍԱՐԱՅԲՈՒԼԱՂԻ ԼԵՌՆԱՇՂԹԱՅԻ ԱՅՐՈՒՄ ՀԱՅՏԱԲԵՐՎԱԾ
ԱՆՀԱՅՏԱՑԱԾ ՇԻՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԱՔՆԱՍՈՒՆՆԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Սարայբուլաղի լեռնաշղթայի հյուսիսային լանջի ձորերից մեկում հեղինակը հայտաբերել է կարստային ծաղում ունեցող մի այր, որի մեջ մեծ քանակութեամբ կուտակված են եղել դանազան կենդանիների ոսկորներ և այլ մնացորդներ:

1798 տարբեր օրեկտներին բաղկացած այդ նյութի մշակումը հնարավորութեամբ է սովել հեղինակին մի շարք եզրակացութեաններ անելու.—

1. Նշված են հավաքված նյութի կուտակման հինգ հիմնական միջոցներ:

2. Այրում կուտակված կենդանիների մնացորդների մեջ կան ժամանակակից ձևերից սկսած մինչև 3—4 հազար տարի առաջ անհայտացած հին կենդանիների մնացորդներ:

3. Այրում հայտաբերված բվիճի (*Bubo bubo* L.) կերի մնացորդների հիման վրա առաջ են բերվում կրծողների և բվիճի կերի օրեկտների տարածման սոկոսային հարաբերութեանները Սարայբուլաղի պայմաններում:

4. Այրում հայտաբերված մնացորդների հիման վրա հեղինակը մի քանի եզրակացութեաններ է անում այն մասին, թե ինչ ուղղութեամբ է ընթացել տեղական իշղարների (*Meles meles canescens* Blanf.) էվոլյուցիան և ինչ կենդանիներ են եղել ընակվելիս Սարայբուլաղի լեռնաշղթայի վրա սրանից 3—4 հազար տարի առաջ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍ ՌԵՍՊՈՒՐԿԻԿԱՅԻ ԵՎ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԱՎՏՈՆՈՍ
ՍՍ ՌԵՍՊՈՒՐԿԻԿԱՅԻ ՄԻՋԱՏԱԿԵՐՆԵՐԸ (Insectivora) ԵՎ
ՁԵՌՆԱԹԵՎԻԿՆԵՐԸ (Chiroptera)

Հեղինակը մշակել է սիստեմատիկական տեսակետով 8 ողնի, 4 խլուրդ, 117 սրընջակ և 41 չղջիկ: Նշված նյութի ուսումնասիրության հիման վրա պարզվել է, որ վերոհիշյալ ռեսպուրիկաներում պատահում են միջատակերների 10 աշխարհագրական ձև և ձեռնաթևիկների 15 աշխարհագրական ձև, սրանցից չղջիկի մի ենթատեսակը (*Myotis myotis hajastanicus* Arg.) Հայաստանի համար էնդեմիկ է հանդիսանում:

Բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում Հայկ. ՍՍ Ռեսպուրիկայում պատահող խլուրդը: Ըստ երևույթին նա նոր, դեռևս բավարարչափով չուսումնասիրված ենթատեսակ է:

Իր եզրակացությունների մեջ հեղինակը ընդգծում է միջատակերների և ձեռնաթևիկների տարածման մի քանի առանձնահատկությունները, այլ և անհրաժեշտ է համարում տեղական խլուրդների հետագա ուսումնասիրությունն ու նրանց որսի կազմակերպումը տնտեսական նպատակներով:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԳԵՐՄԱՆԱՄԿԱՆ (Mesocricetus brandti Nehr.)
ՏԱՐԱԾՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒՅՑՈՒՆՆԵՐԸ
ԿՈՎԿԱՍՅԱՆ ՊԱՐԱՆՈՑՈՒՄ

Քննութեան առնելով անդրկովկասյան գերմանամկան տարածման առանձնահատկութիւնները Կովկասյան պարանոցում, հեղինակը հանգում է հետևեալ եզրակացութիւններին.

1. Անդրկովկասի գերմանամկները պատկանում են մի տեսակին՝ Mesocricetus brandti Nehr.:

2. Նույն տեսակին է վերաբերում նաև գերմանամկների դադատայան դաղութը Նաաքենդ, Բուլնակ, Բուզլեն, Ջիրյուրտ և, հավանորեն, Պասով-յուրտ վայրերում:

3. Նյութերի հետազոտութեամբ սխտեմատիկ ուսումնասիրութիւնը կարող է հանգեցնել ներտեսակային զիֆերենցիացիայի ըստ ստորին սխտեմատիկ կատեգորիաների:

4. M. brandti արեալի հատվածութիւնը հիմնականում բացատրվում է պատմական պատճառներով:

5. Ձի բացառված արեալի Կախեթի ճյուղի և Դաղստանի դաղութի միջև ներկայումս գոյութիւն ունեցող կապի հնարավորութիւնը Տուրուք-Սարըղու, Բոզդաղ լեռների և, այնուհետև, դեպի արևելք, Կաբրխտանի և Ղուբայի ու Դաղստանի նախալեռների վրայով:

6. Հիմնվելով M. brandti և մերձավոր ձևերի արդի տարածման վրա Կովկասում ու Փոքր Ասիայում, որպես և ցամաքի այդ մասի երկրաբանական պատմութեան վրա, կարելի է անվիճելի համարել տվյալ տեսակի հարավային ծագումը:

7. M. brandti Կովկաս ներթափանցելու ժամանակը և նրա կյանքի գինամիկան այստեղ կարող են պարզվել միայն այն ժամանակ, երբ գիտութիւնը կհարստանա պալեոնտոլոգիական տվյալներով:

ՄԵՂՐՈՒ ՇՐՋԱՆԻ ԿՈՐԻՉԱՎՈՐ ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐԻ
ՎՆԱՍԱՏՈՒ ԲՁԵՁՆԵՐԸ

Մեղրու շրջանում կորիզավորների անկասկած և ուժեղ ֆասաստուները հետևյալներն են՝ *Melolontha aceris* Fald., *Polyphylla olivieri* Lap., *Adoretus discolor* Fald., *Capnodis tenebrionis* L., *Capnodis carbonaria* henningi Fald., *Lampra bella* Gory., *Chrysobothris affinis* tetragramma F., *Cerambyx dux* Fald., *Rhynchites auratus armeniacus* Zaitz., *Rh. bacchus* L., *Coenorrhinus aequatus* L., *Eccoptogaster mediterraneus* Egg.:

Վերոհիշյալից առանձնապես մեծ տնտեսական նշանակություն ունեն սովյալ շրջանի համար *Rhynchites auratus armeniacus*. 6—7 տարեկան երիտասարդ ծառերի նկատմամբ հատուկ տեղ են դրավում *Capnodis carbonaria* և *C. tenebrionis*: Անմշակ հողամասերում և թույլ ծառերի համար ուժեղանում է *Cerambyx dux*-ի ազդեցությունը: Նկատված է *Polyphylla olivieri* և *Melolontha aceris* թրթուրների ուժեղ տարածում հողի մեջ, բայց ճշգրիտ պարզել ֆնասի չափը մեզ չհաջողվեց: Պակաս էական նշանակություն ունեն հետևյալները՝ *Anthaxia mirabilis* Zhich., *A. tractata* Ab., *Mesosa curculionoides* L.

Հայաստանի ֆաունայի համար հայտարարված են նոր տեսակներ՝ *Capnodis carbonaria henningi*, *Lampra bella*, *Anthaxia mirabilis*.

Պայմարի միջոցները կորիզավոր պտղաբուծության զարգացմանը և վնասատուների դեմ Մեղրու օրջանում

Ներկա աշխատանքի մեջ նշված ֆնասատու բզեզները լուրջ դեր են խաղում Մեղրու շրջանի պտղատու ծառերի բերքատվության իջեցման գործում, մասնավորապես կորիզավորների, որոնք առաջնակարգ նշանակություն ունեն Մեղրու շրջանի տնտեսության համար: Այս իսկ պատճառով անհրաժեշտ է կարևոր ուշադրություն դարձնել պտղատու այգիները պաշտպանելու վրա սովյալ ֆնասատուներից:

Հողօռողիմաստի պայքարի բաժնի կողմից 1937—38 թվերին առաջարկված են պայքարի հետևյալ միջոցները պտղատու այգիների համար՝

Ագրոտեխնիկական

1. Ծառերի չորուկները և հիվանդ ծառերը կտրել և հեռացնել այգուց, իսկ դոյացած վերքերն անմիջապես ծածկել մածիկով:
2. Բնի և հաստ ճյուղերի մաքրելը հին կեղևից:

3. Աշնանը փորել, կամ վարել ամբողջ այգին, կամ ծառի ընդ շուրջը, տրպեզդի ոչնչանան հողի մեջ ձմեռող թրթուրները և հարսնյակները:

4. Այգուց հեռացնել այն թփերը և ծառերը, որոնք մի շարք տեսակների համար կարող են ֆլասատուների օջախ հանդիսանալ:

Մեխանիկական

1. Թափուկների սիստեմատիկ հավաքումը այգում:
2. Աշնանը թափված տերևների հավաքումը և ոչնչացումը:
3. Այոճաթիթեռի և ոսկետուտի ձմեռող ընների հավաքումը:

Քիմիական

Երեք անգամ սրսկում բորոզոյան հեղուկով $+0,1\%$ նիկոտին սուլֆատ կամ փարիզյան կանաչ:

1. Բողբոջների ուռչելու ժամանակ.
2. Ծաղկաթափից անմիջապես հետո.
3. Երկրորդ սրսկումից 15 օր հետո:

Սակայն Հողօդկոմատի առաջադրված միջոցառումներից միայն մի քանիսն են կիրառվել Մեղրու շրջանում: Այսպես՝ 1938 թվին երեք սրսկումից լրիվ կերպով կատարվել է միայն երկրորդը: Առաջին սրսկումը կատարվել է միայն բորոզոյան հեղուկով, երրորդ սրսկումը ամենևին չի կատարվել այն պատճառով, որ Մեղրու շրջանում թթենիները գտնվում են պողատու ծառերի միջշարքերում և շերամի որդը կարող է թունավորվել բուժանյութից:

Ազրոտեխնիկական միջոցառումներից ոչ լրիվ կիրառվել է փորը (գարնանը աշնան փոխարեն) և չորուկների կտրտելը:

Դիլավորն այն է, որ չորուկները, կտրելուց հետո, չեն ոչնչացվում և հեռացվում այգուց, և այդպիսով դառնում են ֆլասատուների տարածման աղբյուր: Թափուկները և թափված տերևները նույնպես չեն հավաքվում և հեռացվում: Ինչ խոսք, որ այն ձևով կիրառվող միջոցառումները չեն կարող ապահովել պողատու ծառերի պաշտպանությունը ֆլասատուներից, առավել ևս, որ պաշտպանության միջոցներ չեն նախատեսված մի շարք բզեզների տեսակների դեմ, որ մինչև այժմ հայտնի չեն եղել որպես ֆլասատուներ թե Մեղրու համար և թե ընդհանրապես, որոնք սակայն ինչպես պարզեցին մեր դիտողությունները, ֆլասում են պողատու ծառերին:

Դրականության մեջ նշված են պայքարի բազմաթիվ միջոցներ կորեզավորների ֆլասատու բզեզների դեմ, որոնք սակայն լրիվ չեն ապահովում նրանց ֆլասատուներից:

Ստորև բերվում են դրանցից կարևորները ըստ ֆլասավածքների տեսակների և նրանց հիման վրա՝ Մեղրու շրջանի կորիզավորների ֆլասատու բզեզներից պաշտպանելու միջոցառումները:

Հողային վնասատուներ: Այս խմբի մեծամասնությունը նկատմամբ պայքարի ձևերը վատ են ուսումնասիրված այն պատճառով, որ թրթուրային ստադիան, որն անցնում է հողում, անբավարար է հետազոտված: Շնորհիվ

Պրինցի Ազրբեջանում կատարած աշխատանքներին բավական լրիվ ուսումնասիրված են պայքարի միջոցները *Polyphylla olivieri* դեմ և գրականության մեջ կան բավական տվյալներ այդ մասին: Պրինցի առաջադրված պայքարի միջոցները հետևյալներն են.

1. Գարնանը խոր վար, 20 սմ. խորությամբ, երբ հողի ջերմաստիճանը 12° C է, կամ աշնանը, երբ հողի ջերմաստիճանն իջնում է 12 C-ից ցած:

2. Հողի կուլտիվացիա և միաժամանակ թրթուրների և հարսնյակների հեռացում:

3. Բզեզների հավաքումը:

4. Ծծմբածխածնի կիրառումը—1 քառ. մետրին 250 գր.: Ծծմբածխածնի և պարադիքլորբենզոլի խառնուրդ 125—150 գր. 1 քառ. մետրի վրա (2 մաս ծծմբածխածին, 1 մաս պարադիքլորբենզոլ):

5. Հողի ախտահանում քլորպիկրինով—40 գր. 1 քառ. մետրին նոր տնկարքի կազմակերպումից առաջ:

Միջատներ, որոնք վնասում են կամբիումը և փայտափշուրը—*Capnodis carbonaria henningi*, *C. tenebrionis*, *Lampra bella*, *Anthaxia mirabilis*, *Anthaxia tractata*, *Chrysobothris affinis tetragramma*, *Cerambyx dux*, *Molorchus umbellatarum*, *Mesosa curculionoides*, *Eccoptogaster mediterraneus*.

Այս խմբի ֆլուսատուների մեծամասնության դեմ պայքարելը դեռևս դժվար է, որովհետև նրանց թրթուրները թագնված կյանք են վարում: Ռեկկը Թրիխտրոմ գրել է պայքարի փորձեր *Capnodis tenebrionis* դեմ, օգտագործելով ծծմբածխածին, պարադիքլորբենզոլ, նաֆթալին և ցիան կալի:

Գազակերպ թուլյների գործածությունը նպատակ է դնում ոչնչացնել այն թրթուրներին, որոնք կենտրոնացված են գլխավորապես ծառերի արմատների մոտ: Թուլյն մտցվում է փոսիկների, կամ օդակաձև ափսոսների մեջ, որոնք շրջապատում են ծառը (ակոսի շառավիղն է 10—13 սմ.), 8—10 սմ. խորությամբ: Թուլյնը մտցնելուց հետո ակոսը ծածկվում է հողով և սրորվում: Վերև նշված ինսեկտիսիդներից ամենից լավ արդյունք է տվել պարադիքլորբենզոլը, միջատի մահացությունը հասել է 95%, ամեն մի ծառի համար 34—62 գր. գործադրելու դեպքում: Նպատակահարմար է ախտահանումը կատարել մասսայական ձևադրման ժամանակ, բզեզներին վախեցնելու և արմատներից հեռացնելու համար:

Capnodis carbonaria վերաբերյալ Պաղեստինում նույն պարադիքլորբենզոլով կատարված փորձերը տվել են բացասական արդյունքներ (*Bodenheimer*), (3): *C. tenebrionis* բզեզների դեմ, որպես մեխանիկական պայքար, Ռեկկը առաջադրել է ծառերի թափ տալը սավանների վրա, իսկ տրնկարաններում բզեզների հավաքելը ձեռքով, մինչև ձվադրումը: *Bodenheimer*-ը նույնպես կողմնակից է *C. carbonaria* բզեզները ձեռքով հավաքելուն:

Cerambyx dux վերաբերյալ առաջարկված է բզեզների հավաքումը դուրս գալուց անմիջապես հետո: Մյուս տեսակների վերաբերյալ պայքարի արմատական ձևեր դեռևս չեն մշակված: Որպես նախազգուշական պայքար—

բի միջոցներ գրականության մեջ առաջարկված են հնարավորին չափ շուտ հեռացնել այդուց ֆլուսաված ծառերը, ճյուղերը և այրել: Ընդհանրապես Buprestidae, Cerambycidae և Jpidae ընտանիքների բզեզների դեմ պայքարը կարող է տեղի ունենալ ագրոտեխնիկական միջոցառումներով: Ղրանք են՝ ուշադրությամբ խնամել այգին, անմիջապես հեռացնելով չորացող ճյուղերը և ծառերը, նաև կոճղերը, ժամանակին փորել հողը, ջրել, կանոնավոր և ճիշտ կերպով պայքարել ֆլուսատուների և հիվանդությունների դեմ (Уваров, 32):

Մադիկները և պտուղները վնասող միջատներ—կնճիթավորներ—Rhynchites auratus armeniacus, R. bacchus, Coenorrhinus aequatus:

Նկատի ունենալով կնճիթավորների ապրելու եղանակը և ձևը (դանդաղաշարժությունը, նամանավանդ վաղ առավոտյան, երբ ընկնելիս իրենց «ձևացնում են սատկած»), գործադրվում է բզեզների թափ տալը ծառերից, սավանի վրա, մինչև ձվադրումը, երբ դեռևս բողբոջներով են կերակրվում: Խորհուրդ է տրվում նաև փորել հողը ամռան վերջում, թրթուրները և հարսնյակները ոչնչացնելու համար:

Անհրաժեշտ է նաև հավաքել և ոչնչացնել թափուկները: Առաջարկվում է սրսկել արսենաթթվային կալցիումով 12—15 գր. մեկ հեկտարի համար, ծաղկումից 2—3 շաբաթ հետո, մասսայական ձվադրման ժամանակ (Чугунин и Юганова, 34):

Բացի այդ, հատկապես Rh. bacchus ձմեռող բզեզների դեմ գործ են անում որսող բներ և արմատային գրավչանյութեր, իսկ գարնանը, երբ բզեզները բարձրանում են սաղարթի վրա, գործ են անում որսող գոտիներ: Սրանք են հիմնականում այն միջոցառումները, որոնք բերված են գրականության մեջ: Հիմնվելով սրանց, ապա մեր գիտողությունների վրա, փորձենք տալ Մեղրու շրջանի կորիզավորների պաշտպանության համար պայքարի մոտավոր ձևերը:

1. Հողային ֆլուսատուների դեմ անպայման կիրառել՝

ա) Գարնան, փորել ժամանակ, հավաքել թրթուրները ծառերի տակից և ոչնչացնել:

բ) Հավաքել բզեզները թուխքի ժամանակ:

Առանձին դեպքերում կարելի է վերևում նշված ձևով գործածել ծծմբածխածին կամ մաքուր վիճակում, կամ պարագիջլորբենզոլի խառնուրդով:

2. Բնափայտին ֆլուսող բզեզների դեմ պայքարի արմատական միջոցներ գրականության մեջ չկան: Մեղրու շրջանի պայմաններում հնարավոր է կիրառել գլխավորապես ագրոտեխնիկական միջոցառումներ:

ա) Չորուկները վաղ գարնանը էտել անպայման հեռացնելով նրանց այդուց և այրել, որովհետև չորուկների մեջ մեծ մասամբ ապաստանում են տարբեր ֆլուսատու միջատներ, նամանավանդ բզեզների տարբեր ստադիաները: Buprestidae բզեզների վերաբերյալ հնարավոր է օգտագործել մեխանիկական պայքարի միջոցներ: Վաղ առավոտյան ծառերը թափ տալ և բզեզները ձեռքով հավաքել ձվադրումից առաջ:

3. Կնճիթավոր բզեզների Rhynchites դեմ լավ է կիրառել ծառերի թափ տալը սավանի վրա: Այս ձևով հավաքած բզեզները պետք է ոչնչացնել:

Ամռան վերջում պետք է նաև կատարել հողի վար՝ թրթուրները և հարսնյակները ոչնչացնելու համար, թափուկներն անպայման պետք է հավաքել և ոչնչացնել:

4. Կեղևակերների դեմ պայքարելու համար առաջին հերթին անհրաժեշտ է ծառերի թուլացած և չորացած մասերը ժամանակին հեռացնել և ոչնչացնել. բոլորովին չորացած ծառերը արմատախիլ անել և ոչնչացնել:

Վերահիշյալ բզեզների տեսակներից մի քանիսը հանդես են գալիս որպես էնդեմիկներ տվյալ շրջանի և նրան հարակից Նախիջևանի ավտոնոմ ռեսպուբլիկայի որոշ մասի համար, դրանք են՝ *Anthaxia mirabilis*, *A. tractata*, մյուսներից ՍՍՌՄ-ում շատ սահմանափակ տարածում ունեն հետևյալները—*Lampra bella*, *Capnodis carbonaria henningi*, *Cerambyx dux*, *Melolontha aceris*: Սրանց հետ միասին կան մի շարք ֆլասատու տեսակներ, որոնք Հայաստանում տարածված են միայն Մեղրու շրջանում: Այս իսկ պատճառով կարանտին ձեռնարկումները Մեղրու համար ունեն հատուկ լուրջ նշանակություն, որի համար և Հայաստանի Հողօրդկոմատի Կարանտին տեսչությունն արգելում է այնտեղից դուրս հանել որևէ տնկի, առանց սերտիֆիկատի:

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՏԱՓԱՍՏԱՆԻ ՄՈՐԵԽՆԵՐԸ

Լենինականի տափաստանի մորեխների ֆաունան ըստ տեսակների աշխարհագրական բաշխման կարելի է բաժանել հետևյալ չորս խմբերի.—

1. Լայն սարածվածներ

Այս խմբի մեջ մտնում են.

Omocestus haemorrhoidalis	Ch. mollis
Stauroderus scalaris	Ch. albomarginatus
Chorthippus apricarius	Ch. dorsatus
Ch. biguttulus	Psophus stridulus
Ch. bicolor	

2. Միջերկրականի ավերին ել պալեարկիկայի հարավային մասում սարածված սեսակներ

Omocestus petraeus	Aiolopus thalassinus
Chorthippus macrocerus	Oedaleus decorus
Ch. vagans	Oedipoda coerulescens
Euchorthippus pulvinatus	Calliptamus italicus
Doclostaurus brevicollis	C. siculus
D. tartarus	Eupreopcnemis plorans
Notostaurus albicornis	Paratettix meridionalis

3. Կովկասում, Թյուրքիայի ել Իրանի հարակից մասերում, ինչպես ել Սեյլ ծովի ավերում ու Սիրիայում սարածված սեսակներ

Stenobothrus weneri sviridenkoi	Sphingonotus coerulipes
Chorthippus brauneri	Nocarodes rubripes
Ramburiella bolivari	N. cyanipes
Oedipoda schochi	Pyrgomorpha brachyptera
Thalpomena ledereri	Calliptamus tenuicercis

4. ՀՍՍՌ-ի համար էնդեմիկ սեսակներ

Omocestus demokidovi	Aeropus armeniacus
----------------------	--------------------

Ըստ բուսական գոտիների նշվում են հետևյալ խմբերը.

1. Ալպյան գոթի

Stenobothrus weneri sviridenkoi
 Omocestus demokidovi
 Aeropus armeniacus

Այդ գոտու համար բնորոշ են երկու էնդեմիկ տեսակներ և մի ավելի լայն տարածված տեսակ:

2. Անտառ-սափասանային գոթի

Stenobothrus weneri sviridenkoi	Ch. mollis
Omocestus haemorrhoidalis	Ch. macrocerus
Chorthippus apricarius	Ch. albomarginatus
Ch. biguttulus	Ch. dorsatus
Ch. bicolor	Euchorthippus pulvinatus
	Psophus stridulus

Այս տեսակներից մեծամասնությունը լայն տարածվածներից են, մի մասը—բորեալ ձևեր են, որոնք հատուկ են պալեարկտիկայի անտառային գոտուն, տարածվել են այստեղ հավանաբար արևմուտքից Անատոլիական լեռնաշղթայի վրայով:

3. Լեռնա-սափասանային գոթի

Omocestus haemorrhoidalis	Nocarodes rubripes
Stauroderus scalaris	N. cyanipes
Chorthippus—նույն տեսակներն են	Calliptamus italicus

ինչ որ նախորդ գոտում:

Ուսումնասիրված շրջանում հիմնական գոտին է. տեսակների մի մասը լայն տարածված և բորեալ ձևեր են, մի մասը բնորոշ է Առաջավոր Ասիայի լեռնային սիստեմի համար (Nocarodes), այստեղ է գտնվում նաև լավ հարմարված իտալական մորեխը:

4. Գետնախիլային բուսականությամբ ծածկված լեռնալանջեր

Chorthippus vagans	O. coeruleascens
Ch. brauneri	Thalpomena ledereri
Euchorthippus pulvinatus	Nocarodes rubripes
Dociostaurus brevicollis	Calliptamus italicus
Oedaleus decorus	C. siculus
Oedipoda schochi	C. tenuicercis

Այս ստացիաների համար, որոնք մասամբ կան արդեն նախորդ գոտում, բայց սովորաբար նրանցից ցած են ընկած, բնորոշ են արդեն բազմաթիվ Միջերկրականի փիերում տարածված տեսակներ, որոնք հանդիպում են մեծ քանակությամբ հաջորդ գոտայում: Դրա հետ մեկտեղ, այստեղ կան Առաջավոր Ասիայի համար բնորոշ և Պոնտական տեսակներ (Chorthippus brauneri, Thalpomena ledereri):

5. Փօփեղային կիսամապասային զանա

Omocestus petraeus	O. coeruleascens
Doclostaurus brevicollis	Sphingonotus coerulipes
D. tartarus	Pyrgomorpha brachyptera
Notostaurus albicornis	Calliptamus italicus
Ramburiella bolivari	C. siculus
Oedaleus decorus	C. tenuicercis
Oedipoda schochi	

Ուսումնասիրված շրջանի համար ավելի պակաս ընդորոշ է այս ամենա-
ցածր զոնան, որտեղ կան Միջերկրականի փփերում և Առաջավոր Ասիայում
տարածված բազմաթիվ տեսակներ, որոնք այնուհետև հասնում են մինչև
Արաքսի հովիտը:

6. Ճահձային խոնավ սագիաճեր

Chorthippus apricarius	Aiolopus thalassinus
Ch. biguttulus	Eupreopcnemis plorans
Ch. dorsatus	Paratettix meridionalis

Ըստ իրենց ֆնասատվության գյուղատնտեսության մեջ հիշյալ մորեխ-
ները բաժանվում են հետևյալ խմբերին.

1. Դաշտային կուլտուրաներին (հացահատիկային, առվուշտի և այլն)
ֆնասող մորեխներ.

Omocestus haemorrhoidalis	Euchorthippus pulvinatus
Stauroderus scalaris	Doclostaurus brevicollis
Chorthippus apricarius	Ramburiella bolivari
Ch. biguttulus	Oedaleus decorus
Ch. bicolor	Oedipoda schochi
Ch. mollis	O. coeruleascens
Ch. macrocerus	Calliptamus italicus
Ch. dorsatus	C. siculus

Մրանցից առավել էական է Calliptamus italicus—խառական մորեխը:
2. Բանջարանոցային կուլտուրաներին ֆնասողներ.

Aiolopus thalassinus
Eupreopcnemis plorans
Paratettix meridionalis

Վերոհիշյալ բոլոր տեսակները ոչ կուլտուրական բույսերի տերիտորիա-
յում հանդիսանում են մարգագետնային և տափաստանային բուսականու-
թյան ֆնասատուներ, այսինքն ֆնասում են՝ խոտհարքներին և արոտավայ-
րերին:

3. Մորեխների մնացած տեսակները, սովորաբար կուլտուրական բույ-

սերի սերիտորիայում չեն գտնված և հանդիսանում են միայն մարգագետինների և արոտավայրերի ֆլուսսատուներ. այդպիսիներն են.

Stenobothrus wernerii sviridenkoi	Psophus stridulus
Omocestus demokidovi	Thalpomiena ledereri
Chorthippus vagans	Sphingonotus coeruleipes
Ch. brauneri	Nocarodes rubripes
Aeropus armeniacus	N. cyanipes
Dociostaurus tartarus	Pyrgomorpha brachyptera
Notostaurus albicornis	Calliptamus tenuicercis

Պայթարի միջոցները մորեխների դեմ

Մորեխների դեմ հայտնի են պայթարի բազմաթիվ միջոցներ, ինչպիսիք են՝ քիմիական, մեխանիկական, ավիացիոն, ագրոտեխնիկական և այլն: Այստեղ կանգ եմ առնում միայն Հայաստանի պայմաններում գործադրվող միջոցների վրա:

Ըստ գոյություն ունեցող տվյալների, Հայաստանում առավել էֆեկտավոր մեթոդ է համարվում գրավչանյութերով թունավորելը, որը բազմաթիվ փորձերի ընթացքում արդարացրել է իրեն: Դրա համար վերցվում է համապատասխան գրավչանյութ, թույն և ջուր: Գործադրվող գրավչանյութերից հայտնի են՝ ջուլայ, բրինձ, թեփ, փայտի թեփ, չոր գոմաղը և այլն: Ելնելով տնտեսական տեսակետից, մեզ մոտ գործադրվում է գլխավորապես բրնձի մանրացված թեփից գրավչանյութ, սակայն նրանք մորեխին գրավում են միայն առաջին և երկրորդ հասակում: Գրավչանյութը էֆեկտիվ է դառնում միայն այն դեպքում, երբ նրա հետ խառնվում է ջուլայ 1: 3 (75% բրնձի թեփ և 25% ջուլայ). այս տվյալները հաստատված են Հայաստանի Բույսերի պաշտպանութայն ինստիտուտի փորձերով:

Թունավոր գրավչանյութի համար գործ է ածվում գլխավորապես արսենաթթվային նատր. 16 կգ. բրնձի թեփին հարկավոր է 300 գր. արսենաթթվային նատր: Դրական արդյունքներ ստանալու համար ընդդեմ հասուն մորեխների, այդ քանակը կիսով չափ պետք է ավելացնել: Այնուհետև 16 կգ. մանրացրած բրնձի թեփին անհրաժեշտ է 12—16 լիտր ջուր ավելացնել խոնավությունը պահպանելու համար:

Պատրաստի գրավչանյութը ցրում են ցորենը ցանելու ժամանակ, այն հաշվով, որպեսզի ամեն մի հեկտարի վրա ընկնի 24 մինչև 32 կգ. գրավչանյութ:

Գրավչանյութը ցրվում է օրվա բոլոր ժամերին, եթե իհարկե մորեխներն իրենք չեն տեղափոխվում, իսկ նրանց տեղափոխման դեպքում գրավչանյութը պետք է ցրել վաղ առավոտյան և երեկոյան:

Բացի այդ մեթոդից, գործադրում են երբեմն նաև փոշոտման և սրսկման մեթոդները. սակայն նկատի ունենալով թունավոր նյութի մեծ էֆեկտիվությունը՝ հիմնականում գործ է ածվում վերջինս:

Պայթարի մեխանիկական միջոցները շատ բազմազան են: Նրանցից ամենից ավելի գործադրվել էն մեզ մոտ կտավե ցանցերը, որոնք ցույց են

ավել հատուկ էֆեկտիվություն 1934—1935 թ. թ. Ապարանի և Ախտայի շրջաններում (առանձնապես 1 և 2-րդ հասակի թրթուրների դեմ). ավելի պակաս էֆեկտավոր են ցախավելները, սավանները կամ խոր փորված առուները:

Պայքարի հիմնական հարցերից մեկը հանդիսանում է նրա ժամանակին կազմակերպումը: Անհրաժեշտ է պայքարը սկսել այն ժամանակ, երբ արդեն սկսում են ձվից դուրս գալ առաջին հասակի մորեխները, որովհետև զարգացման հետ մեկտեղ նրանց մոտ ավելանում է տեղաշարժեր կատարելու կարողությունը և նրանք արագ կերպով գրավում են մեծ տարածություն, դժվարացնելով պայքարն իրենց դեմ:

Պայքարը ժամանակին կազմակերպելու համար անհրաժեշտ է գիտենալ մորեխների տեսակային կազմը, զարգացման ժամկետները, էկոլոգիական լուսանկարագրությունները (տարբեր տեսակների մոտ), նրանց քանակությունը և այլն:

Ս. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԿՈՅԱՆԻ ԵՎ ԱԶԻԶԲԵԿՈՎԻ ՇՐՋԱՆՆԵՐԻ
ԿԼԱԴՈՑԵՐՆԵՐԻ ԵՎ ԷՎԿՈՊՕՊՈՂԴՆԵՐԻ ՖԱՈՒՆԱՅԻ ՄԱՍԻՆ

Այս աշխատութեամբ հեղինակը տալիս է նշված շրջանների զանազան տիպի ջրակալների պլանկտոնի ամենակարևոր բաղադրիչների՝ կլադոցերների և կոպեպոդների ֆաունան ըստ այն մատերիալի, որ հավաքված է 1933—1935 թվականներին Հայաստանի նախկին բնապատմական թանգարանի էքսպեդիցիայի (մասամբ) և մասնավոր անձանց միջոցով (առավելապես):

Միկոյանի շրջանի մատերիալը գրեթե բացառապես Արփա գետի հովտի բրնձի արտերից է, իսկ Ազիզբեկովինը՝ տեղացիներից—Մարաթոսի, Պիրոսի, Տերտերենց, Զիմոյի և Հաջալի անուններով կոչված գյուղերից:

Ռուսերեն բնագրում առաջ են բերված ահա զանազան տիպի այս ջրակալներն իրենց ներկայացրած էկոլոգիական պայմաններով ու պարունակված ձևերով առանձին-առանձին և ապա ամբողջ արդյունքը մի ընդհանուր ցուցակով պատկերացրած (տես էջ 116):

Ցուցակից պարզ երևում է.

1. Երկու շրջանն էլ շատ աղքատ են կլադոցերների և էվկոպեպոդների կողմից—ընդհանրապես և համեմատութեամբ Հայաստանի այլ շրջանների.

2. Միկոյանի շրջանն այս տեսակետով ավելի աղքատ է.

3. Հայտարբերված բոլոր տեսակներն էլ առանձին հետաքրքրութուն չեն ներկայացնում, հայտնի ու շատ սովորականների թվին են պատկանում.

4. Ուշագրավ է Միկոյանի շրջանի բրնձի արտերում հայտարբերված *Macrothrix* սեռն իր անսովոր քանակով ու ցուցաբերած հատկանիշներով: Սրա ներկայացուցիչները ցարդ Հայաստանում հայտարբերված *Macrothrix*-ի ոչ մի տեսակին էլ չեն պատկանում և, ինչպես երևում է, հանդես են գալիս այստեղ երկու նոր տեսակով:

Ս. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻԼԻՋԱՆԻ, ԻՋԵՎԱՆԻ ԵՎ ԿԵՓԱՆԱՎԱՆԻ
ՇՐՋԱՆՆԵՐԻ ԷՎԿՈՊԵՊՈՂԴՆԵՐԻ ՖԱՈՒՆԱՄԱՍԻՆ

Այս աշխատութեամբ տրվում է Ս. Հայաստանի հիշյալ երեք շրջանների էվկոպեպոզների ֆաունան համաձայն այն համեմատաբար հարուստ մատերիալի, որ հեղինակն անձամբ հավաքել է 1927 և 1928 (մասամբ նաև 1932) թվականներին՝ այդ շրջանների բազմաթիվ ու բազմազան ջրակալներին:

Դիլիջանի շրջանից հետազոտված են Պարզ և Ժանդոտ կոչված գյուղերը, Հախկիլուռի շրջակայքի վեց և Գյուլքենդի յոթը գյուղերը և հայտնաբերված ընդամենը 11 տեսակ էվկոպեպոզ, որոնց ցուցակն առաջ է բերված ուսաներեն բնագրում (էջ 125):

Իջևանի շրջանի 4 ջրամբարից միայն երկուսը և այն էլ ընդամենը միայն 5 տեսակ էվկոպեպոզ են տվել (էջ 125):

Այլ պատկեր է ներկայացնում Ստեփանավանի շրջանը: Այս շրջանը հարուստ է մնայուն տիպի լճերով ու լճակներով, ինչպես և ժամանակավոր տիպի զանազան ջրակալներով:

Հետազոտված են Ալեքսանդրովկայի, Ակպայլուռի, Ազգայլայի, Օրան-Լոռու և Վարդաբլուռի ենթաշրջանները և տրված սրանցից յուրաքանչյուրի տարբեր տիպի ջրակալների էվկոպեպոզներն առանձին առանձին ու ապա այդ բոլորի ամբողջ արդյունքն ի մի բերված մի ընդհանուր ցուցակի մեջ (տես ուսու. բնագրի էջ 132):

Այս շրջանը, ինչպես պարզ երևում է ցուցակից, աչքի է ընկնում իր այդ ձևերի հարստութեամբ՝ համեմատած նախորդ շրջանների, ինչպես և Հայաստանի այլ, այս տեսակետով ուսումնասիրված, շրջանների հետ (Միլիոյանի, Ադիգրեկովի, Ամասիայի) և զոոգեոգրաֆիական տեսակետով որոշ հետաքրքրականութուն է ներկայացնում:

Ընդհանրապես նկատելի է, որքան Ս. Հայաստանի շրջաններով դեպի հյուսիս ենք բարձրանում, այնքան նրանց ֆաունան հարստանում, բազմազան ու բազմաբանակ է դառնում: